# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԹ-ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Fortinet | FortiGate | FG-201G, FC-10-F2H1G-950-02-36, FC1-10-LV0VM-248-02-36, FC1-10-EMS04-428-01-36 | Fortinet, Inc. | Սարքավորման տեխնիկական պահանջներ՝ 1 հատ Նոր սերնդի միջցանցային էկրան FG-201G FortiGate-201G (Next-Generation Firewall, NGFW) ՝ նախատեսված 19″ ստանդարտ սերվերային պահարանում տեղադրման համար՝ 1U բարձրությամբ: Ինտերֆեյսներ՝ 10 հատ GE RJ45, ներառյալ 1 MGMT, 1 HA և 8 switch պորտ: 8 հատ 5/2.5/1 GE RJ45 բազմագիգաբիթ պորտ: 4 հատ GE SFP սլոտ: 8 հատ 10/1 GE SFP+/SFP սլոտ: 480 GB ներկառուցված SSD կրիչ: Սարքը ապահովում է ցանցային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փաթեթների, գաղտնագրված տրաֆիկի և անվտանգության բովանդակության բարձր արտադրողականությամբ մշակում՝ մասնագիտացված ապարատային արագացուցիչների կամ համարժեք տեխնոլոգիական ճարտարապետության կիրառմամբ։ Արտադրողականության նվազագույն ցուցանիշներ՝ Firewall Throughput (IPv4)՝ 39 Gbps՝ արտադրողի պաշտոնական չափման մեթոդաբանության համաձայն: IPS Throughput՝ 9 Gbps՝ Enterprise Traffic Mix և ակտիվացված logging պայմաններում: NGFW Throughput՝ առնվզն 7 Gbps՝ Firewall, IPS և Application Control գործառույթներով: Threat Protection 6 Gbps՝ Firewall, IPS, Application Control և Malware Protection գործառույթներով: IPsec VPN throughput՝ 36 Gbps, միաժամանակյա TCP սեսիաներ՝ 11,000,000, նոր TCP սեսիաներ՝ 400,000 վայրկյանում, Firewall policies՝ 10,000: Սարքը ունի երկու ներկառուցված փոփոխական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հոսանքի սնուցման բլոկ՝ 1+1 ռեզերվավորմամբ, մուտքային լարումը՝ 100–240 V AC, 50/60 Hz, Աջակցվում են Active-Active և Active-Passive բարձր հասանելիության ռեժիմները. Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը՝ 0°C-ից մինչև 40°C, 19″ սերվերային պահարանում տեղադրման համար անհրաժեշտ ամրակները ներառված են մատակարարման կազմում։ Լիցենզիաներ և արտադրողի աջակցություն՝ Անվտանգության ծառայությունների համալիր լիցենզիա՝ FortiGate-201G 3 Year Unified Threat Protection (UTP) 3 տարի ժամկետով, ներառյալ՝ Intrusion Prevention System (IPS), Antivirus և Advanced Malware Protection, Cloud Sandbox, Anti-Botnet և C2 Protection, Application Control, URL, DNS և Video Filtering, Inline CASB, Anti-Phishing, Anti-Spam ծառայություն: Արտադրողի Premium մակարդակի տեխնիկական աջակցություն՝ 3 տարի ժամկետով, ներառյալ՝ ծրագրային ապահովման և անվտանգության ստորագրությունների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թարմացումները, համապատասխան ամպային ծառայությունների հասանելիությունը, արտադրողի տեխնիկական աջակցության կենտրոն դիմելու հնարավորությունը, ինչպես նաև ստանդարտ RMA և սարքավորման առաջանցիկ փոխարինման (Advanced Hardware Replacement) ծառայությունները՝ արտադրողի պաշտոնական պայմաններին համապատասխան: Log Management և Endpoint VPN/ZTNA: Log Management՝ Կենտրոնացված մատյանների կառավարման և վերլուծության հարթակ՝ վիրտուալ սարքի (Virtual Appliance) ձևաչափ, VMware ESXi և Linux KVM վիրտուալացման հարթակների աջակցություն, լիցենզավորված ընդունման ծավալ՝ 6 ԳԲ մատյանային տվյալ օրական, ցանցային անվտանգության սարքերից մատյանների և անվտանգության իրադարձությունների կենտրոնացված հավաքագրում, նորմալացում, ինդեքսավորում, |

պահպանում, որոնում, հարաբերակցում և վերլուծություն, անվտանգության իրադարձությունների հարաբերակցում, միջադեպերի ձևավորում, ծանուցումներ և հետաքննության գործիքներ, իրական ժամանակում աշխատող կառավարման վահանակներ (Dashboards), ստանդարտ և անհատականացվող հաշվետվություններ, հաշվետվությունների ավտոմատ ձևավորում և սահմանված ժամանակացույցով ուղարկում, դերերի վրա հիմնված հասանելիության կառավարում և ադմինիստրատորների գործողությունների գրանցում, մատյանային տվյալների պահուստավորում, արխիվացում և արտահանում, արտադրողի Premium մակարդակի տեխնիկական աջակցություն՝ 3 տարի ժամկետով, ներառյալ ծրագրային թարմացումները, նոր տարբերակների հասանելիությունը և արտադրողի աջակցության կենտրոն դիմելու

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Арт-Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом <<<-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հնարավորությունը: VPN / ZTNA՝ 100 վերջնակետի համար նախատեսված VPN/ZTNA բաժանորդագրային լիցենզիա՝ 3 տարի ժամկետով, ներառյալ՝ SSL VPN, IPsec VPN, Zero Trust Network Access (ZTNA), վերջնակետերի անվտանգության վիճակի ստուգում, կենտրոնացված կառավարում, քաղաքականությունների կիրառում, մատյանների հավաքագրում և հաշվետվություններ: EMS կառավարման հարթակը պետք է տեղակայվի Պատվիրատուի ենթակառուցվածքում՝ On-Premise եղանակով: EMS-ի լիցենզիան, տեղադրումը, սկզբնական կարգաբերումը, ծրագրային թարմացումները և արտադրողի 24×7 տեխնիկական աջակցությունը պետք է ներառված լինեն առաջարկի ընդհանուր արժեքում: Առաջարկի հետ ներկայացվող փաստաթղթեր՝ արտադրողի կամ արտադրողի կողմից լիազորված ներկայացուցչի կողմից տրամադրված լիազորման նամակ՝ Manufacturer Authorization Form (MAF), առաջարկվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սարքավորումների և ծրագրային լուծումների արտադրողի պաշտոնական տեխնիկական նկարագրերը (Datasheets), առաջարկվող բոլոր սարքավորումների, լիցենզիաների, բաժանորդագրությունների և տեխնիկական աջակցության ծառայությունների արտադրողի SKU/Part Number-ների ամբողջական ցանկը, փաստաթուղթ կամ հայտարարություն, որը հաստատում է, որ առաջարկվող սարքավորումը նոր է, նախկինում չի օգտագործվել, վերականգնված կամ վերանորոգված չէ և գտնվում է արտադրողի պաշտոնական երաշխիքային ու տեխնիկական աջակցության ներքո: տեխնիկական պահանջներին համապատասխանության աղյուսակ՝ յուրաքանչյուր պահանջի դիմաց նշելով առաջարկվող լուծման համապատասխանությունը և արտադրողի պաշտոնական փաստաթղթի համապատասխան էջը կամ հղումը, արտադրողի պաշտոնական գործընկեր հանդիսանալու կարգավիճակը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստատող փաստաթուղթ կամ համապատասխան վկայական, երաշխիքային և տեխնիկական աջակցության պայմանների մանրամասն նկարագրություն՝ ներառյալ աջակցության մակարդակը, գործողության ժամկետը, արձագանքման պայմանները և RMA/Advanced Replacement ծառայության առկայությունը, մատակարարի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների առկայությունը հաստատող արտադրողի վկայականներ կամ հավաստագրեր, առաջարկվող լուծման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ բաղադրիչների, մալուխների, մոդուլների, տրանսիվերների, սնուցման պարագաների և ծրագրային բաղադրիչների ամբողջական ցանկը, հայտարարություն, որ առաջարկվող գինը ներառում է տեխնիկական պահանջներով նախատեսված բոլոր սարքավորումները, լիցենզիաները, բաժանորդագրությունները, տեղադրումը, կարգաբերումը, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեխնիկական աջակցությունը և անհրաժեշտ ուղեկցող ծառայությունները: Մատակարարումից և ակտիվացումից հետո ներկայացվող փաստաթղթեր՝ լիցենզիաների և բաժանորդագրությունների ակտիվացման հաստատում արտադրողի պաշտոնական պորտալում՝ Պատվիրատուի անունով կամ Պատվիրատուի հաշվին, սարքավորումների սերիական համարների և ակտիվացված լիցենզիաների համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, արտադրողի երաշխիքի և տեխնիկական աջակցության գործողության ժամկետների հաստատում, անհրաժեշտության դեպքում՝ արտադրողի պորտալում սարքավորումների և ծառայությունների գրանցման հաստատում: Մատակարարված սարքավորումների, լիցենզիաների և կատարված աշխատանքների վերջնական հանձնման-ընդունման ակտ: Բոլոր բաղադրիչները մեկ արտադրողի լուծումներ են և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կառավարվում են միասնական անվտանգության էկոհամակարգի շրջանակում: Սարքը համատեղելի է Ընկերությունում առկա FortiClient VPN / ZTNA և FortiAnalayzer լիցենզիաների հետ: |